ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

«Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամի կարիքների համար ԵՊՀ գլխավոր մասնաշենքի նախամուտքի և հինգերորդ հարկի վերահատակագծման և վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-22/165» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1

30 հունիսի 2022 թ., ժամը 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

1. Թ. Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ),

հանձնաժողովի անդամներ՝

2. Ա. Մարգարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),
3. Է. Թովմասով՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),
4. Մ. Խաչատրյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),
5. Լ. Գազարյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),

հանձնաժողովի քարտուղար՝

Ցոլակ Հակոբյան՝ (Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ):

1. Տեղեկատվություն՝ «ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-22/165» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 30 հունիսի 2022 թ-ին՝ ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված գնման առարկաների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց սույն ընթացակարգի շրջանակում գնման հայտով սահմանված գնման առարկաների գները՝ մեկ թվով արտահայտված.

N	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը (ՀՀ դրամ)
1	ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախամուտքի (ֆոյեի) և 5-րդ հարկի վերահատակագծման և վերանորոգման աշխատանքներ	100800000

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Հասցե, հեռ.
1	ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ ԲԲԸ	ք. Երևան, Շիրակի 82, հեռ. 091415808, 099776699

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ ԲԲԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը պարունակում էր հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ ԲԲԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես հրավերին կցված ծավալաթերթ-նախահաշվի բաժինների շեղումը հրավերին կցված ծավալաթերթ-նախահաշվի նկատմամբ գերազանցում է 10 տոկոսը:

Քանի որ ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ ԲԲԸ մասնակցի հայտում ծավալաթերթ-նախահաշիվը չէր համապատասխանում հրավերի պահանջներին, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մինչև 08.07.2022 թ. և մասնակցին տալ մեկ աշխատանքային օր, որպեսզի նա շտկի հայտնաբերված թերությունները: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվեց տեղեկացնել մասնակցին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տեղեկատվություն մասնակցի գործողությունների մասին.

08.07.2022 թ-ի նիստի ժամանակ հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ ԲԲԸ մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է թերությունը: Հանձնաժողովը որոշեց մասնակցի հայտը համարել հրավերի պահանջներին բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Մասնակցի (մասնակիցների) կողմից առաջարկված գները հետևյալն են.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Քանակը	Նախահաշվային գինը չափաբաժնի համար	Մասնակցի անվանումը և առաջարկված գինը (ՀՀ դրամ)	
				ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ ԲԲԸ	
				Գինն առանց ԱԱՀ*	Գինը ներառյալ ԱԱՀ
1	ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախամուտքի (ֆոյեի) և 5-րդ հարկի վերահատակագծման և վերանորոգման աշխատանքներ	1	100800000	57202765	68643318

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն «Գինն առանց ԱԱՀ» սյունակը)

10. Տեղեկություն՝ մրցույթի արդյունքների ամփոփման մասին.

Մասնակցի (ների) ներկայացրած փաստաթղթերի և գնային առաջարկի (ների) հիման վրա հանձնաժողովը որոշեց որպես ընտրված մասնակից (առաջին տեղ գրաված) հայտարարել.

1, չափաբաժնի (ների) մասով՝ ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ ԲԲԸ մասնակցին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

11. Տեղեկություն՝ մրցույթի արդյունքների հրապարակման մասին.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հրավերի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից: Հանձնաժողովը հաստատեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվեց հրապարակել

պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և մասնակցին (ներին) ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝	Թ. Համբարձումյան	ստորագրություն
Անդամներ՝	Ա. Մարգարյան	ստորագրություն
	Է. Թովմասով	ստորագրություն
	Մ. Խաչատրյան	ստորագրություն
	Լ. Գազարյան	ստորագրություն
Քարտուղար՝	Ցոլակ Հակոբյան	ստորագրություն